

ՃԵՆՆԵՐԸ ԵՎ «ՃԵՆԱՑ ԱՇԽԱՐՀԸ» ԸՍՏ ՀԱՅԿԱԿԱՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԻ

Հ. Ս. ՍՎԱՋՅԱՆ

Հայկական աղբյուրները հայ նշանավոր նախարարական տներից մեկի՝ Մամիկոնյանների ծագումը կապում են ինչ-որ հեռավոր ու հանելուկալից ցեղի հետ, որին անվանում են «ճենք», իսկ նրանց զբաղեցրած երկիրն էլ Ճենաստան:

Հայ պատմադրության մեջ ճենների մասին ամենավաղ հիշատակությունը գտնում ենք Փավստոս Բուզանդի մոտ: Արշակունիների ու Մամիկոնյանների փոխհարաբերություններից մի երկու դեպք պատմելիս (Պապ թագավոր ու Մուշեղ Մամիկոնյան, Վարադգատ և Մանվել Մամիկոնյան) պատմիչը նշում է, որ Մամիկոնյաններն իրենց ծագումով թագավորական ցեղից են, «ազգապատուական», ինչպես Արշակունիները և որ նրանք եկել են Հայաստան «թողեալ... զթագաւորութիւնն ճենաց աշխարհին»¹, ուր նրանց «նախնիքն լեալ էին թագաւորք»²: Բուզանդի այս վկայություններից բնավ էլ հայտնի չի դառնում, թե ովքեր էին ճենացիները, ինչ երկիր էր նրանց «աշխարհը» և թե ինչպես են ճենազն Մամիկոնյանները հայտնվել Հայաստանում:

Ճենների, նրանց երկրի, Մամիկոնյանների Հայաստանում հայտնվելու մասին ավելի մանրամասն է խոսում Մովսես Խորենացին, իր «Հայոց պատմության» մեջ մի գլուխ հատկացնելով այդ հարցին, որն էլ իր կարծիքով անդակության ու նյութի կարևորության պատճառով բերում ենք ամբողջությամբ: «Վախճանեալ Արտաշրի որդւոյ Սասանայ՝ թողու զթագաւորութիւնն Պարսից որդւոյ իւրում Շապհոյ: Ի սորա աւուրս ասեն եկեալ ի Հայս նախնի ազգին Մամիկոնէից յարեւելից հիւսիսականէն, ի քաջատոհմիկ և ի գլխաւոր աշխարհէ և ամենայն հիւսիսականաց ազգաց առաջին ասեմ իսկ զճենացն. որ ունին զրուցս այսպիսիս:

Յամս կատարման կենացն Արտաշրի, Արբոկ ոմն Ճեն-բակուր, որպէս ասի ի նոցա լեզուն պատիւ թագաւորութեան. սորա երկու դայեկորդիք, Բղդոխ և Մամգոն անուն կոչեցեալ, մեծ նախարարք: Եւ չարախօսեալ Բղդոխայն զՄամգոնայն՝ հրամայեաց թագաւորն Ճենաց Արբոկ սպանանել զՄամգոնն: Զոր իմացեալ Մամգոնայն՝ ոչ գայ ի կոչն արքայի, այլ փախուցեալ աղխիւ իւրով անկանի առ Արտաշիր թագաւորն Պարսից³: Եւ Արբոկ հրեշտակս առաքէ խնդրել զնա. և ի շտելն Արտաշրի՝ պատերազմ ի վերայ նորա յօրինէ թագաւորն Ճենաց: Եւ իսկոյն մեռեալ Արտաշրի՝ թագաւորէ Շապուհ:

¹ «Փաւստոսի Բուզանդացւոյ Պատմութիւն Հայոց», Թիֆլիս, 1913, էջ 299:

² Նույն տեղում, էջ 360:

³ Մյուս բոլոր զրույցներում Մամիկոնյանների նախնիները երկուսն են՝ Մամիկ ու Կոնակ. եղբայրները: Միայն այստեղ է, որ նրանք հանդես են գալիս որպես մեկ հոգի՝ Մամգոն անվան տակ, որը Մ. Արեղյանի դիտողությամբ «զոյգ անունների իբրև մի անձի ընդունելը, ինչ-

Արդ՝ թէպէտ և ոչ տայ Շապուհ ՂՄամդոնն ի ձեռս տեառն իւրոյ, այլ և ոչ յԱրեաց երկրին թողու. բայց ամենայն աղխին իւրով առաքէ զնա իբրև զվտարանդի առ զործակալս իւր որ ի Հայս: Եւ յդէ առ թագաւորն ճենաց՝ ասելով, թէ «Մի թուեսցի քեզ զժուար, զի ի ձեռս քո ոչ կարացի տալ ՂՄամդոն. վասն զի երդուեալ էր նմա հօրն իմոյ ի լոյսն արեղական. այլ վասն անխռով զքեզ առնելոյ՝ հալածեցի զնա յաշխարհէս իմմէ յեզր երկրի և ի մուռս արևու, որ հաւասար է նմա մահու. և արդ մի՛ լիցի պատերազմ ընդ իս և ընդ քեզ»: Եւ զի քան զամենայն բնակեալս ի վերայ երեսաց երկրի խաղաղասէր ասեն զոլ զազգն ճենաց՝ յանձն առնու առնել զհաշտութիւն. ուստի յայտ իսկ է, եթէ են արդարև խաղաղասէր և կենսասէր ազգն ճենաց:

Սքանչելի է և աշխարհն առատութեամբ ամենայն պտղոց, և զեղեցիկ բուսովք զարդարեալ, քրքմաւէտ և սիրամարդաշատ և բազմամետաքս, անբաւութիւն յամուրաց և հրեշից, և որ էշայծեմունսդ անունանեն. ուր հասարակաց կերակուր ասեն զառ մեզ պատուական և սակաւուց ճաշակելիս՝ զփասեան և զպոր, և ալլք ալսպիսիք: Այլ զականց և զմարդարտաց ոչ ասեն զիտել զհամար մեծամեծացն. իսկ պատուականքս առ մեզ զգեստուց և սակաւուց ազանելիք՝ հասարակաց նոցա է զգեստ: Եւ այս յաղագս աշխարհին ճենաց»⁴:

Խորենացու այս պատմութիւնը (այնպիսի տարբերութիւններով, որոնք չեն խանգարում խնդրառու հարցի ուսումնասիրութեանը) զետեղված է Սեբեոսի «Պատմութեան» մեջ⁵:

Ճեների և նրանց թագավորի մասին մի հետաքրքիր մանրամասնութիւն է պարունակում «Պատմութիւն Տարօնոյ» աշխատութիւնը, որի համաձայն Արտավանի սպանութեան համար Սասանյանների դեմ վրեժխնդրական պատերազմի ելած Խոսրով հայոց թագավորի և պարսից Արտաշիր թագավորի միջև հաշտարար միջնորդի դերում հանդես է դալիս ճենաց թագավորը. «Սաստկացաւ մարտ պատերազմին ի վերայ պարսից, և զաւրացաւ արքայն Հայոց և սկսաւ ապականել զերկիրն պարսից ամս Ժ և հիմն ի վեր ջանայր առնել սպանմամբ և գերութեամբ: Եւ եղև միջնորդ արքայն ճենաց և ոչ կարաց զրաւել զսիրտ նոցա ի հաշտութիւն»⁶: Ի դեպ, Սեբեոսի «Պատմութեան» Գ զլիւմ ևս հիշատակվում է մի մարդ «որ եկեալ էր հրեշտակութեամբ ի ճենաց թագաւորէն առ արքայն Խոսրով»⁷:

Ավելի ուշ շրջանի վերաբերյալ ճեների մասին հետաքրքիր տեղեկութիւններ է հաղորդում VIII դարի պատմիչ Ղևոնդը: Խորենացու նման նա ևս մի ամբողջ զլուխ (ԺԱ) է հատկացրել այդ ցեղի պատմութեանը. Վլիթ ամիրայի

պես Մամ-կոն Խորենացու մէջ, հատուկ է ժողովրդական վեպին» (տե՛ս Մ. Արևիկյան, Հայ ժողովրդական վեպը, Թիֆլիս, 1908, էջ 115, ծան. 1):

⁴ «Մովսիսի Խորենացու Պատմութիւն Հայոց», Տփղիս, 1913, գիրք Բ, գլ. 2Ա, էջ 221—223:

⁵ «Սերէոսի եպիսկոպոսի Պատմութիւն», Երևան, 1939, գլ. Գ: Այս գլխի հեղինակի վերաբերյալ հայ պատմագրութեան մեջ հայտնվել են րազմաթիւ իրարամերժ կարծիքներ, որոնցից վերջինը պատկանում է Գ. Արզաբեկյանին, ըստ որի հիշյալ գլխի հեղինակը Ազաթանգեղոսն է (տե՛ս Գ. Վ. Արզաբեկյան, «Սեբեոսի պատմութիւնը» և Անանունի առեղծվածը, Երևան, 1965, էջ 77, 80, 84—86): Եթե այդպիս և, ապա ճեների ու Մամիկոնյանների մասին հաղորդման առաջնութիւնը պատկանում է Ազաթանգեղոսին:

⁶ Հովհան Մամիկոնյան, Պատմութիւն Տարօնոյ, Երևան, 1941, էջ 67:

⁷ «Սերէոսի եպիսկոպոսի Պատմութիւն», էջ 12:

օրոք (705—715), նրա զորավարներից մեկը՝ Մահմեդը, նվաճողական մի արշավանք է կատարում դեպի Ճենաց աշխարհը: Ըստ պատմիչի, երկու հարյուր հազարանոց մի բանակով անցնելով Դամասկոսից Ասորեստան և ասյա Պարսկաստան ու խորասան, արաբ զորավարը մտնում է Ճենաց աշխարհը և բանակ խփում Բոտիս դետի մոտ: Այստեղից հրովարտակ է ուղարկում Ճենաց արքային՝ հնազանդություն պահանջելով, բայց արաբ զորավարի ինքնավստահ պահանջին ի պատասխան ստացվում է Ճենաց թագավորի ոչ պակաս ինքնավստահ մերժումը, թե՛ «Մի՞ արդեօք հզորագոյն իցես դու քան զամենայն թագաւորս, որ ի սկզբանցն և այսր տիրեցին ի վերայ աշխարհի: Բաբելոնացոց թագաւորն, որ տիեզերաց տիրեաց, և Մակեդոնացոցն և Պարսից ընդէ՞ր նոքա ոչ կարացին տիրել ի վերայ աշխարհիս մեր: ...հարկեցոյց զքեզ դնել զանձն քո և զանձինս զօրացդ եկելոց ընդ քեզ, իբրև թէ ոչ գոյին գերեզմանք ի Դամասկոս անձանց ձերոց»⁸: Այնուամենայնիվ Ճենաց արքան պատրաստակամություն է հայտնում արաբ զորավարին ընծաներ տալ որպես «օրէն թագաւորաց», բայց ոչ երբեք որպես հարկատու: Այս պատասխանից հետո Մահմեդը պահանջում է երեսուն հազար աղջիկներ, խոստանալով ստանալուն պես հեռանալ խաղաղություն: Ճենաց արքան առերես համաձայնվում է այս պայմանին, իսկ զաղտնապես հրամայում է պատրաստել դիպակներով ծածկված սայլեր, ուր կուռ սպառազինությամբ քառասուն հազար ընտիր հեծյալներ է տեղավորում և որպես Մահմեդի պահանջած աղջիկներ անցկացնում է դետից այն կողմ: Այսպես անցնելով պատմիչի հիշած Բոտիս գետը, Ճենաց բանակը հարձակվում է արաբների վրա և կոտորում մինչև վերջին մարդը: Մի փոքր խմբով ազատվում է միայն Մահմեդը, ապավինելով իր երիվարների արագավազությամբ:

Այս պատմությունը համառոտած շարադրել է և Ասողիկը⁹, իսկ խիստ աղավաղված ու կրճատված՝ Շապուհ Բագրատունին¹⁰: Մխիթար Անեցին էլ է նույն պատմությունն անում, նշելով նաև աղբյուրը՝ «Ջայս պատմէ Ղևոնդ երէց»¹²: Ճեների մասին հայկական աղբյուրների բոլոր տեղեկությունները ամփոփված ու չափաժոռ ձևով շարադրված են Սիմեոն Ապարանցու մոտ¹³: Կան հայկական աղբյուրներ ևս, որ հատվածաբար հիշատակում են Ճեների մասին, բայց մեծ մասամբ կցկտուր ու այս կամ այն աղբյուրներից ծաղկաքաղ արված և, հետևաբար, ոչինչ նոր բան չասող¹⁴:

Ճեների և Ճենաց աշխարհի մասին հայկական աղբյուրների բոլոր հիշատակություններից մեր առաջ հառնում է Պարսկաստանից հյուսիս-արևելք

⁸ «Պատմութիւն Ղևոնդեայ Մեծի վարդապետի Հայոց», Ս. Պետերբուրգ. 1887, էջ 38:

⁹ Նույն տեղում, էջ 37—40:

¹⁰ «Ստեփանոսի Տարօնեցոյ (Ասողկան) Պատմութիւն տիեզերական», Ս. Պետերբուրգ. 1885, էջ 126—127:

¹¹ «Պատմութիւն Շապհոյ Բագրատունւոյ», ի լոյս ածին Գ. Տեր-Մկրտչեան և Մեսրոպ Եպիսկոպոս, էջմիածին, 1921, էջ 17—18: Այս պատմիչը միակն է մեր մյուս պատմիչներից, որ Ճեներին նույնացնում է խաղարների հետ (տե՛ս նշվ. աշխ., էջ 18):

¹² «Մխիթարայ Անեցոյ Պատմութիւն, Սկիզբն, զուրիս Ի՛ է Զաւելուացք», ի լոյս ած Ք. Պ., Ս. Պետերբուրգ. 1879, էջ 45:

¹³ «Սիմէօն վարդապետի Ապարանցոյ Վիպասանութիւն սակս Պահլաւունեացն զարմի և Մամիկոնեացն սեոի», Վաղարշապատ, 1870, էջ 28—32:

¹⁴ «Սոփերք Հայկական», հատ. Ե, Վենետիկ. 1853, էջ 48, հատ. Զ, Վենետիկ. 1853, էջ 120—121:

ընկած արևելյան տիպի մի թագավորություն, իր նախարարական սիստեմով ու զինվորական բռնապետական-կառավարական ապարատով: Պետք է, որ այդ թագավորությունը բավականին ուժեղ ու ազդեցիկ լիներ, քանի որ նրա մասին պատմիչը գրում է «քաջատոհմիկ և գլխաւոր», «ամենայն հիւսիսակա-նաց ազգաց առաջինը»¹⁵ և այլն: Նրանց թագավորը, որ կոչվում էր Ճենբա-կուր «որպէս ասի ի նոցա լեզուն պատիւ թագաւորութեան»¹⁶, III դարում հանդես է եկել հաշտարար միջնորդի դերում այնպիսի հզոր պետությունների միջև, ինչպիսիք այդ ժամանակ Հայաստանն ու Պարսկաստանն էին, ունեցել է դիվանագիտական հարաբերություններ, դեսպաններ ուղարկելով հայոց թա-գավորի մոտ¹⁷ ու, հավանաբար, նաև ընդունելով: Ճենաց թագավորությունը ունեցել է քառասուն հազարանոց բանակ, ուր գերակշռել է հեծելազորը և այն էլ՝ ընտիր ու կուռ սպառազինությամբ¹⁸:

Ճեները սկզբնական շրջանում նույնացվել են հայ պատմագրության մեջ հիշատակվող ճաների¹⁹, իսկ հետագայում՝ չինացիների հետ: Հայ մատենա-գիրների գործերի ուսումնասիրությամբ զբաղված համարյա բոլոր գիտնա-կաններն էլ չեն կասկածել, որ հայկական աղբյուրների ճեները չինացիներն են, միշտ ու ամենուր «ճեներ» և «Ճենաստան» բառերը ծանոթագրելով կամ թարգմանելով որպես «չինացիներ» և «Չինաստան»: Սակայն եղել են առան-ձին գիտնականներ, որոնք կասկածի տակ են առել այդ տեսությունը: Դրան-ցից առաջինը Ք. Պատկանյանն էր, որը հակառակ նախկինում հայտնած իր կարծիքի (որ ճեները նույն չինացիներն են)²⁰, անցած դարի 70-ական թթ. վերջին գրում էր, թե «հայ պատմիչների՝ IV դարում Հայաստան գաղթած ճեները ոչ մի դեպքում չեն եղել իսկական չինացիներ, ինչպես սովորաբար մեկնաբանում են այդ անվանումը»²¹: Ք. Պատկանյանը նշում է նաև, որ այդ ճեները Հայաստան են գաղթել Ամու-Դարյայի ափերից²²: Ճեների չինացիներ լինելու հանգամանքը ժխտում էր նաև հայագետ Հանես Սկոլդը, ցույց տալով նաև, որ նման հասկացողությունը միջին պարսկերենի ազդեցության հետևանք

¹⁵ Խորենացի, էջ 221:

¹⁶ Նույն տեղում, էջ 222:

¹⁷ Սեբեոս, էջ 12:

¹⁸ Ղևոնդ, էջ 39: Ասողիկ, էջ 127:

¹⁹ Н. Адонц, Армения в эпоху Юстиниана, Ереван, 1971, էջ 403: Ինքը՝ Ն. Ադոնցն էլ հակված է այդպես մտածելու: Ընդունելով, որ ճեների երկիրը «Պարսկաստանից արևելք՝ Բահլից հետո ընկած երկրներից մեկն է, այսինքն Չինաստանը (—Հ. Ս.)», այնուամենայնիվ այն դիտողությունն է անում, թե «Մամիկոնյանների տոհմական հատկությունը, բուռն կրա-կոտությունը և առանձնահատուկ քաջությունը նրանց ավելի շուտ մերձեցնում է դեռևս VI դա-րում իրենց ռազմատենչությամբ աչքի ընկնող ճաների (цанны) հետ, քան հեղաբարո չինա-ցիների» (տե՛ս նշվ. աշխ., էջ 403—404):

²⁰ «История Халифов вардапета Гевонда писателя VIII века», пер. К. Паткан-яна, СПб., 1862, էջ 142, ծան. 105: «Армянская география VII века по Р. Х. (припи-сываемая Моисею Хоренскому)», текст и перевод с присовокуплением карт и объяснительных примечаний издал К. П. Патканов, СПб., 1877, էջ 82, ծան. 207:

²¹ К. Патканов, О месте занимаемом армянским языком в кругу индо-европейских, «Известия Кавказского отдела императорского русского географического общества», т. VI, Тифлис, 1879—1881, էջ 47:

²² Նույն տեղում:

է²³, Գ. Աբգարյանը, խոսելով Մամիկոնյան տոհմի ծագման ու Հայաստան գաղթելու ժամանակի հարցերի շուրջը, Ճենների մասին փակագծերում ավելացնում է՝ «եթե դրանք իրոք շինացիներ են»²⁴:

Մանրակրկիտ ուսումնասիրությունները մեզ հանգեցրել են այն համոզման, որ հայկական աղբյուրների Ճենները ոչ մի դեպքում չեն կարող լինել ո՛չ Ճաները, և, առավել ևս, ո՛չ էլ շինացիները: Այդպիսի նույնացումը անվանումների սոսկ արտաքին նմանության հետևանք է:

Եթե Ճենները շինացիներ չեն, իսկ նրանց երկիրն էլ Չինաստանը չէ, ապա ովքե՞ր են նրանք և ո՞րն է նրանց երկիրը:

Ք. Պատկանյանը փորձել է որոշել Ճենաց երկրի տեղը՝ երկու անգամ անդրադառնալով այդ հարցին և յուրաքանչյուր անգամ բնակության տարբեր վայրեր հատկացնելով նրանց: Նա «Աշխարհացոյցի» ուսերեն թարգմանության իր ծանոթագրություններից մեկում հայտնում է, որ հայ գրողների «Ճենները ապրում են այժմյան Չինաստանից զգալիորեն դեպի արևմուտք, Կաշգարի մոտերքում, հեփթաղներից արևելք»²⁵, մինչդեռ նախքան այդ, ինչպես արդեն վերևում նշեցինք, մեծ հայագետը նրանց բերում էր Ամու-Դարյայի՝ «Թուրքեստանի Արալը թափվող գլխավոր գետի»²⁶ ափերից: Բերված երկու տեսակետներից առաջինը, մեր կարծիքով, միանգամայն մերժելի է: Կաշգարը, որի մոտերքում է Պատկանյանը տեղադրում Ճենաց երկիրը, Թուրքեստանի ծայրագույն քաղաքն էր, սահմանային քաղաքը Չինաստանի ու միջինասիական մի շարք ժողովուրդների միջև²⁷: Գտնվելով «հեփթաղներից արևելք», որոնց իսկական հողերը կազմում էին «Պամիրի երկու կողմերի լեռնային հովիտները»²⁸, Կաշգարը և նրա շրջակայքը կազմում էին այժմյան Ուզբեկական ՍՍՀ-ի Ֆերգանայի մարզը: Ճենների երկրի նման տեղադրությունը ոչ մի կերպ չի հաստատվում հայկական այլ աղբյուրների ու հատկապես Ղևոնդի վկայություններով:

Ավելի հավանական պետք է կարծել Պատկանյանի երկրորդ կարծիքը, որի համաձայն Ճենների երկիրը պետք է փնտրել ավելի մոտ՝ Ամու-Դարյայի շրջակայքում:

Ճենաստանի կամ Ճենաց աշխարհի աշխարհագրական տեղի, նրա բնակիչմայական պայմանների մասին խոսվում է «Աշխարհացոյցի» թե՛ համառոտ և թե՛ ընդարձակ խմբագրություններում, ուր ի միջի այլոց բոլորովին առանձին հիշատակվում է և մի երկիր՝ սեռական հոլովում ունենալով «Սիւնցւոց» (ընդարձակ խմբագրությունում), «Սինէացւոց» (համառոտ խմբագրությունում) ձևը²⁹, որը մեր կարծիքով հենց Չինաստանն է:

«Աշխարհացոյցի» ընդարձակ խմբագրությունում Ասիայի 37-րդ երկիրը Ճենաց երկիրն է. «Լէ աշխարհ Ասիոյ Սինիկիա է, որ է Ճենք, յելից կալով

²³ L'Origine des Mamiconiens d'après Moïse de Khorène par Hannes Skold, „Revue des études arméniennes“, t. V, Paris, 1925, էջ 132, Գ

²⁴ Գ. Աբգարյան, նշվ. աշխ., էջ 86:

²⁵ «Армянская география VII века по Р. Х.», էջ 32, ծան. 207:

²⁶ «Энциклопедический словарь», т. Iа, под изд. Ф. А. Брокгауза и И. А. Ефрона, СПб., 1890, էջ 676:

²⁷ В. В. Бартольд, Сочинения, т. II, ч. I, М., 1963, էջ 492:

²⁸ Л. Н. Гумилев, Эфталиты и их соседи в IV в., ВДИ, 1959, № 1, էջ 135:

²⁹ Երկրորդ ձևն ավելի ճիշտ է, ուստի և առաջին՝ «Սինեացի» ձևը ուղղելի է՝ «Սինէացի»:

Սկիւթիոյ. սահմանի նովաւ ի մտից, իսկ ի հիւսիսոյ եւ յելից՝ Անծանօթ երկրաւ. եւ ի հարաւոյ՝ Հնդկօք եւ Սիւնեցոց աշխարհօք. եւ է Ճենաստան ընդարձակ դաշտս բնակեալ ազգս քսանեւինն, յորոց մին մարդակերք, առ Անծանօթ երկրաւ Ունի լերինս վեց. եւ լինի անդ դարիճենիկ եւ կասիմոն, և ի կասիա լեռնէ, եւ սկիւթիկոն՝ որ է ատրազոյն ինքնեղ. եւ ունի հրէշ եւ մուշկ. եւ շիրամարգ շատ, եւ այլ հաւս պիտանիս, եւ քրքումս անբաւ, մինչ զի հեծեալ ոք ի սպիտակ զերգակ ձիով, սպիտակ բազէիւ երթեալ յորս՝ դառնայ դեղնացեալ ամենեւին: Լինի ապրիշում շատ եւ ազնիւ քան զամենայն երկիր. վասն որոյ բնակիչք երկրին արուեստաւորք կերպասագործք ընչաւեւք, յորոց արքայն Ճենբակուր նստի ի քաղաքին Սիւռայ՝ որ է ի հարաւային արեւելեայ ծայրի աշխարհին»³⁰: Սրան հաջորդում է արդեն Սինէացոց երկրի նկարագրութիւնը, որը, ինչպէս ասացինք, կարող է հենց Զինաստանը լինել:

Այս տեղեկութիւնը մեզ հնարավորութիւն է տալիս ճեների երկիրը փրնտրել Սկիւթիայից արեւելք, իսկ վերջինս տարածվում էր Բալկաններից մինչև Կասպից ծովի հարավը՝ ձգվելով արեւելյան ափի երկարութեամբ³¹, արեւմուտքում հարեան ունենալով Սկյութիային: Ճեների երկրից հարավ ընկած էլ Հնդկաստանը:

Ճեների երկրի մասին «Աշխարհացոյցի» ընձեռած այս աղոտ պատկերացումը ավելի որոշակի է դառնում Ղևոնդի հայտնած տեղեկութիւններով: Այդ տեղեկութիւնների համաձայն արաբ ղորավար Մահմեդը, դուրս գալով Դամասկոսի կողմերից, շարժվում է դեպի արեւելք, անցնում է Ասորեստանը, Պարսից աշխարհը, վերջինիս արեւելյան ամենահեռավոր նահանգը՝ Խորասանը, հայտնվում է «ի մասն ինչ Ճենաց աշխարհին», բանակ խփում այնտեղ գտնվող Բոտիս կոչվող գետի ափին ու սկսում բանակցութիւնները ճենաց թագավորի հետ: Նշանակում է ճենաց երկիրը պետք է գտնվեր անմիջապէս Խորասանից հետո, սահմանակցեր նրան հարավ-արեւմուտքից և տարածվեր դեպի արեւելք, իր տարածքում ունենալով «հզորագոյն» մի գետ, որին պատմիչը Բոտիս է անվանում և որի ափերին էլ ծավալվում են հիմնական դեպքերը:

Խորասանից հետո դեպի արեւելք ընկած ողջ տարածութեան վրա բացի Ամու-Դարյայից չկա մի ուրիշ այնպիսի գետ, որին կարելի լիներ կոչել «հզորագոյն»: Որ իրոք նշված անունը վերաբերում է Ամու-Դարյա գետին ցույց է տալիս նաև Սեբեոսի «Պատմութեան» մեջ նրան տրված Վեհոտ անունը, որը պահլավերեն հենց նշանակում է Վեհ կամ Մեծ դետ (=հզորագոյն գետ)³²: Ասենք, որ նույն գետը շինարեն անվանվել է Պոտսու կամ Փատսու³³, որը համահնչուն է Ղևոնդի հիշատակած Բոտիս անվան հետ:

Այսպիսով ճենաց երկիրը պետք է տարածված լիներ Պարսկաստանի արեւելյան սահմաններից ոչ շատ հեռու հոսող Ամու-Դարյա գետի ափերին: Դրա անուղղակի վկայութիւնն է նաև Սեբեոսի այն հաղորդումը, ըստ որի Մամիկն ու Կոնակը Ճենաց աշխարհից փախչելիս նախ ապաստանում են

³⁰ «Աշխարհացոյց Մովսեսի Խորենացոյ», Վենետիկ, 1881, էջ 46:

³¹ Նույն տեղում, էջ 42:

³² Աստվածաշնչի մեկնարանները Ամու-Դարյան նույնացնում էին Զայհունին: Այն հայտնի է նաև հին հունական Օքսուս և հին արիական Վախշ անուններով (տե՛ս В. В. Бартольд, Сочинения, т. I, М., 1963, էջ 115):

³³ «Энциклопедический словарь», т. Iа, էջ 676:

խորստանում գտնվող սահմանային քաղաք Բահլ Շահաստանում³⁴։ Հազիվ թե եղբայրները կարողանային Բահլ հասնել այնպիսի հեռավոր տարածությունից, որպիսին ներկայանում է մեզ Պատկանյանի տեղագրած երկիրը։

Ամփոփելով մեր միտքը, կարծում ենք, որ ճենների երկիրը տարածված է եղել Ամու-Ղարյայի և Սիր-Ղարյայի միջև տեղավորված տարածության այն մասում, որը հետագայում արաբներից նվաճվելուց հետո, նրանց կողմից կոչվեց Մավերաննահր՝ Սամարղանդ կենտրոնով³⁵։ Այդ երկիրը կազմում էր շատ աղբյուրներից, այդ թվում նաև հայկական աղբյուրներից հայտնի թուրքեստանի՝ Կասպից ծովից արևելք ընկած այդ լայնածավալ տափաստանների մի մասը³⁶։

Միջին Ասիայի պատմության խոշորագույն մասնագետ, ակադ. Վ. Վ. Բարտոլդը թուրքեստանի ու, մասնավորապես, Մավերաննահրի վերաբերյալ իր հետազոտություններում արաբական աղբյուրներից բերում է տեղեկություններ, որոնք շատ կետերում համընկնում են Ղևոնդի տեղեկություններին։ Մավերաննահրում արաբական նվաճումների պատմությունը անելիս Բարտոլդը գլխավոր ռազմական իրադարձությունը համարում է Վլիթ ամիրայի փոխարքա Քուտեյբի իբն Մուսլիմայի արշավանքները³⁷ և վերջինիս կողմից 712 թ. Սամարղանդի դրավումը³⁸։ Ուսումնասիրվող շրջանում Բարտոլդը ցույց է տալիս պաշտամունքային շատ վայրեր, այդ թվում նաև մարգարեի այն 2700 ուղեկիցների գերեզմանը, որոնք ընկել են «անհավատների» դեմ մղած մարտում³⁹։ Բարտոլդը նշում է, որ տեղական ցեղերը ուժեղ դիմադրություն են ցույց տվել արաբներին, ստիպելով նրանց ռազմական ամրություններ ստեղծել հատկապես Մավերաննահրի հարավ-արևմտյան մասում, ուր Բուխարան ու Սամարղանդն են⁴⁰։

Իմանալով ճենների զբաղեցրած տարածությունը, դժվար չէ պարզել նաև այն, թե ովքեր էին ճենները, մանավանդ երբ դրա համար ավելի որոշակի ապացույցներ կան։ Այդ ապացույցներից առաջինը հենց նրանց թագավորին տրվող պատվանունն է՝ Ճենբակուր՝ «որպես ասի ի նոցա լեզուն պատիւ թագաւորութեան»⁴¹։ Այս Ճենբակուր բառը ևս բավականաչափ հետաքրքրել է գիտնականներին, որոնք միահամուռ կերպով այն բացատրում են որպես թյուրքական լեզվախմբին պատկանող *iağfür* չինարեն Tsen-tze «արեգակի որդի» բառի թարգմանության հայացված ձև⁴²։ Թյուրքական ծագում ունի

³⁴ Ս ե բ ե ո ս, էջ 13։

³⁵ В. В. Бартольд, Сочинения, т. II, ч. II, М., 1964. էջ 322։ Մավերաննահր բառի նշանակում է «գետից այն կողմ» (տե՛ս նշվ. աշխ., հատ. II, մասն I, էջ 118)։

³⁶ Հելլենիստական ժամանակաշրջանում այն Բակտրիական թագավորության մի մասն էր (տե՛ս В. В. Бартольд, Сочинения, т. II, ч. II, էջ 322)։

³⁷ Ղևոնդի մոտ նույն ժամանակաշրջանն է և նույն ամիրան, բայց արշավանքները գլխավորում է Մահմեդը։

³⁸ В. В. Бартольд, Сочинения, т. II, ч. I, էջ 118։

³⁹ В. В. Бартольд, Сочинения, т. I, էջ 216։ Կրկին մի զուգահեռ Ղևոնդի հաղորդած Մահմեդի ու ճենաց թագավորի մասին առասպելախառն զրույցի։

⁴⁰ В. В. Бартольд, Сочинения, т. II, ч. II, էջ 326։

⁴¹ Խ ո Ր Ե Ն Ա Յ Ի, էջ 222։

⁴² «Մովսես խորենացու հայկական պատմություն», աշխարհաբար թարգմանեց և լուսարանեց խորեն ծայրագոյն վարդապետ Ստեփանն, Ս. Պետերբուրգ, 1889, էջ 212, ծան. 480։

նաև Սեբեոսի մոտ գործածված Ճեպետիոյ (ուղղ. հոլովում՝ Ճեպետուի) անունը, որը «Ճեն» բառի ազդեցությամբ նույնպես համարվում է շինարեն բառ։ Վերջինս, որը հայկական այլ աղբյուրներից հայտնի Ջեբու խաբանն է, ինչպես հեշտությամբ դա երևում է առաջին հայացքից, և ինչպես ցույց են տվել Հ. Սկոլդն ու Ստ. Մալխասյանցը⁴³, նշանակում է «յաբղու կազան»⁴⁴, իսկ «յաբղուն ու շաղը թյուրքական կազանատի բարձրաստիճան անձանց տիտղոսներն են»⁴⁵։

Թյուրքական կազանատը VI դարում արդեն զբաղեցնում էր հսկայական մի տարածություն հասնելով մինչև Վոլգա (Իթիլ), իր մեջ միավորելով բազմաթիվ ցեղեր⁴⁶։ Այս իսկ պատճառով հաճախ նրանք իրենց արշավանքներին մասնակից էին դարձնում նաև այդ ցեղերին (մասնավորապես խազարներին)։ Հատկապես Անդրկովկաս կատարած արշավանքների ժամանակ։ Սեբեոսի մի վկայության համաձայն հայ իշխաններից ոմանք «ապստամբեալ գնացին ի ծառայութիւն Մեծին խաբանայ արքայի կողմանցն հիւսիսոյ, ի ձեռն Ճենատանն Ճեպետիոյ. ապա գնացեալ յարևելից յարևմուտս ընդ կողմանս հիւսիսոյ՝ խառնել ընդ զարացն Ճեպետիոյն այնորիկ, հրամանաւ թագաւորին իւրեանց խաբանայ։ Եւ ելեալ ընդ պահակն Ճորա զարաւք բազմութեան՝ գնացին յաւգնականութիւն թագաւորին Յունաց»⁴⁷։ Մովսես Կաղանկատվացին էլ է անում նույն պատմությունը, ուր բյուզանդական կայսր Հերակլին հյուսիսից օգնության են դալիս խազարները⁴⁸։ Կաղանկատվացու մոտ մի ուրիշ տեղում ավելի որոշակի է երևում հյուսիսային ցեղերի վասալական կախվածությունը Թուրքեստանի խաբանից. ըստ այդ վկայության, հոնաց (կամ խաղարաց) արքան՝ Ալփիլիթվերը, այնպիսի քաջագործություններ է կատարում Թուրքեստանում ու այնպիսի անուն վաստակում, որ Թուրքեստանցիների թագավորը նրան կնության է տալիս իր դստերը⁴⁹։

Դուցե նման քաղաքական իրավիճակն է պատճառը, որ Շապուհ Բագրատունին, միակը մեր հայ մատենագրության մեջ, ճեներին նույնացնում է խազարների հետ⁵⁰, իսկ Խորենացին նրանց համարում է «ամենայն հիւսի-

Skold, նշվ. աշխ., էջ 132։ Այս հեղինակը նշված հոդվածում ի մի է բերել խնդրառու բառի շուրջը եղած բոլոր կարծիքները ցույց տալով նրա թյուրքական ծագումը։ Н. Адонц, «Начальная история Армении» у Себеоса в ее отношениях к трудам Моисея Хоренского и Фауста Византийского, «Византийский Временник», т. VIII, вып. 1—2, СПб., 1901, էջ 90։ Հ. Աճառյան, Հայոց անձնանունների բառարան, հատ. Ա, Երևան, 1942, էջ 368։

⁴³ Skold, նշվ. աշխ., էջ 134։ Ստ. Մալխասյանց, Մատենագիտական դիտողություններ, Երևան, 1961, էջ 218։

⁴⁴ М. И. Артамонов, История хазар, Л., 1962 էջ 147։

⁴⁵ նույն տեղում, էջ 146։

⁴⁶ Դ. Ե. Երեմենկ, Թուրքերի ծագումը, Երևան, 1975, էջ 74։ Այս քաղաքական վիճակն է արտացոլված «Աշխարհացոյցում» (տե՛ս էջ 42)։

⁴⁷ Սեբեոս, էջ 69։

⁴⁸ «Սովսեսի Կաղանկատուացոյ Պատմութիւն Աղուանից աշխարհի», Թիֆլիս, 1912, գիրք Բ, գլ. ԺԲ, էջ 159—165։

⁴⁹ նույն տեղում, գիրք Բ, գլ. ԽԱ, էջ 282։ «Բարեմիտ իշխանն մեծագահ Աղիիղութուեր... բազում զործս արութեան ցուցեալ ի Թուրքաստանի առ խազարիականն և ի սէր իւր գրաւեալ զնա տայ զդուստր իւր նմա կնութեան»։

⁵⁰ «Պատմութիւն Շապուհ, Բագրատունւոյ», ի լոյս ածին Գ. Տեր-Մկրտչեան և Մեսրոպ Ասիսկոսյոս, էջմիածին, 1921, էջ 18։

սականաց ազգաց առաջինը», չնայած որ Թուրքեստանը չէր կարող Հայաստանից հյուսիս գտնվել:

Ճենաց երկրի ու ցեղապատկանելության հարցը այսքանով կարելի էր ավարտված համարել, եթե ժխտելով Մամիկոնյանների շինացիներ լինելու տիրապետող կարծիքը, նոր բացատրության անհրաժեշտություն չծագեր: Բարեբախտաբար մեր մատենագրության մեջ կան փաստեր, որոնք նոր բացատրությունների հնարավորություն են տալիս:

Ինչպես հայտնի է հոսորով Հայոց թագավորը Պարթև Անակից ստանալով մահացու վերքեր, մահվան հոգեվարքի մեջ «հրաման տայր զազգատոհմն (Անակի— Հ. Ս.) սատակել»⁵¹: Այս լսելով դայակները Անակի որդիներից՝ Գրիգորին փախցնում են Բյուզանդիա, իսկ «զմիւս եղբայր նորա, որ կոչէր անուն նորա Սուրեան, մանկաբարձքն փախուցին ի դուռն Պարսից. և անդ անաւ առ հաւրաքեռ իւրում, որ էր կին թագաւորին Զուանշերի: Որ իբրեւ գաւրացաւ, գնաց յերկիրն Ճենաց, յետ մահուն հոսորովուհեայ. և կացեալ անդ ամս ժ, թագաւորեաց անդ ի վերայ երկրին ճենաց ամս ժ»⁵²: Սեբեոսի մոտ Մամիկոնյանների նախահայրերն են Մամիկն ու Կոնակը՝ «որդիք Կառնամայ նախարարին, որ էր երկրորդ ի թագաւորութեան Ճենաստանի»⁵³: Շատ հնարավոր է, որ վերոհիշյալ Սուրենը, որը ըստ պատմիչի հետագայում դարձել է Ճենաց աշխարհի թագավոր, նույնական լինի Կառնամայի հետ, որի դերը երկրի քաղաքական կյանքում այնքան էլ չի տարբերվել թագավորի դերից: Խորենացու մոտ էլ երկու եղբայրները կոչվում են «մեծ նախարարք»⁵⁴, ուստի և պատմիչը այնքան էլ չի մեղանշում, երբ Սուրենին անվանում է թագավոր, մանավանդ, երբ այստեղ որոշակի դեր կարող էր խաղալ տոհմական հպարտությունը: Թեպետև կա ժամանակագրական անհամաձայնություն, բայց այն լուկ պատմիչների՝ տարբեր ժամանակներում ապրելու ու ստեղծագործելու, գրույցի՝ նրանց հասած առանձին տարբերակների, գրավոր ու բանավոր աղբյուրների պահպանվածության աստիճանի հետևանքն է:

Այստեղից այն հետևությունն է բխում, որ Անակ Պարթևի հետնորդները կամ Գրիգոր Լուսավորչի սերնդակիցները Ճենաց աշխարհում հասել են բարձր պատիվների, մրցակից դառնալով տեղական թագավորների համար երկրի կառավարման գործում, ուստի և, բնականաբար, հալածվել են վերջիններիս կողմից: Շատ հավանական է, որ պարթևական ծագումն էլ օգնեց, որ եղբայրները չհանձնվեցին ճենաց թագավորին և դարձավ այն գործոններից մեկը, որոնք պայմանավորեցին Մամիկոնյանների հավատարմությունը Արշակունիներին՝ իրենց նախնիների ազգականներին: Հարկ է հիշել, որ է. Դյուլորիեի կարծիքով (որ բերել է Ստ. Մալխասյանցը) «Առ աւատական միապետութեամբ Արշակունեաց զգահն առաջին ունէր արքայն Պարսից, որ կրէր զտիտղոս արքայից արքայի. զերկրորդն ունէին զտեղի թագաւորք Հայոց Արշակունիք, զերրորդն՝ Արշակունիք Բագդրիոյ (որի կազմում հելլենիստական ժամանակաշրջանում գտնվում էր և այն երկիրը, որտեղից փախել էին Մամիկոնյանները— Հ. Ս.) և զչորրորդն որք ի հիւսիսակողմն

⁵¹ «Ազաթանգեղայ Պատմութիւն Հայոց», Տփղիս, 1909, էջ 23:

⁵² Հ ո մ հ ա ն Մ ա մ ի կ ո ն յ ա ն, Պատմութիւն Տարօնոյ, էջ 70: Ա գ ա թ ա ն գ ե ղ ո ս, էջ 23—24:

⁵³ Ս ե բ ե ո ս, էջ 12:

⁵⁴ Խ ո ռ ե ն ա ջ ի, էջ 222:

լերանցն Կովկասու տիրէին ի վերայ Մազքթաց»⁵⁵, Եվ, վերջապես, արդյո՞ք պատահականութիւնն է ստիպել Սիմեոն Ապարանցուն XVI դարում գրելու «Վիպասանութիւն սակս Պահլաւունեացն զարմի եւ Մամիկոնեանցն սեռի»⁵⁶ (ընդգծումը մերն է— Հ. Ս.), ուր Գրիգոր Լուսավորչի տոհմական պատմութեանը զուգահեռ տրված է նաև Մամիկոնյանների պատմութիւնը:

Մամիկոնյանների մասին հղած զրույցները լի են այնպիսի մանրամասնութիւններով, որոնք, ըստ երևութիւն, հորինված են մեր պատմիչների կողմից: Նրանց սերելով հեռավոր ու այդ պատճառով էլ խորհրդավոր ճաներից, Մամիկոնյանների ջատագովները ձգտել են էլ ավելի մեծարել և ամրապնդել նրանց առանց այդ էլ բարձր դիրքը, ավելի բարձրացնել նրանց ազդեցութիւնը երկրի քաղաքական կյանքում: Որպես ապացույց կարող է ծառայել Ստ. Օրբելյանի այն հաղորդումը, որ Օրբելյանների նախնիները, մինչև Հայաստանում վերջնականապես հաստատվելը, Վրաստան են փախել Ճենաց աշխարհից: Օգտվելով վրաց ժամանակագիրներից, «զոր Քարթլիս ցխորեբայ կոչեն»⁵⁷, Սյունյաց երկրի պատմիչը նույն գույներով ու, մոտավորապես, նույն դրդապատճառներով իր նախնիներին բերում է Ճենաց աշխարհից Վրաստան, ուր նրանք կարճ ժամանակում հասնում են քաղաքական մեծ իշխանութեան և, Մամիկոնյանների նման, իրենց ձեռքն են վերցնում երկրի ղինված ուժերի զխավոր հրամանատարութիւնը՝ սպարապետութիւնը, դժվարին պահերին միշտ մնալով զահին ու թագավորին հավատարիմ⁵⁸, հատկութիւններ, որոնք, ինչպես հայտնի է, հենց Մամիկոնյանների առանձնաշնորհներն են համարվել:

ЧЕНЫ И «СТРАНА ЧЕНОВ» ПО АРМЯНСКИМ ИСТОЧНИКАМ

Г. С. СВАЗЯН

(Резюме)

Происхождение рода Мамиконянов армянские источники связывают с загадочным далеким племенем, которое армяне называли ченами, а территорию, занимаемую ими,—Ченастаном. В армянской историографии чены сначала отождествлялись с цанами, а затем—с китайцами.

Анализ сведений армянских источников о ченах, их стране и исторических событиях, связанных с их жизнью, приводит к выводу, что страна ченов лежала между Амударьей и Сырдарьей, в той ее части, которая после завоевания арабами называлась Мавераннахр и имела центром Самарканд. Эта страна в период эллинизма составила часть Бактрийского царства, где правила ветвь парфянских Аршакидов. Армянские источники и особенно труд Иоанна Мамиконяна содержат сведения, которые позволяют говорить о парфянском происхождении Мамиконянов, что подтверждается и другими, косвенными, данными.

⁵⁵ Ասոդիկ, էջ 328, ծան. 48:

⁵⁶ «Պատմութիւն նահանգին Սիսական, արարեալ Ստեփաննոսի Օրբելեան արքեպիսկոպոսի Սիւնեաց», Թիֆլիս, 1910, էջ 372:

⁵⁷ Նույն տեղում, էջ 369—373, 380, 386—389: